

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 26/3

30 հունիսի 2015 թ.

Քննարկվեց «Ռոմա-Տրանս» ՍՊԸ 29.05.2015 թ-ի վարչական բողոքը ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 04.05.2015 թ-ի թիվ 6108489 ակտի դեմ:

«Ռոմա-Տրանս» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

2015 թ-ի մայիսի 4-ին ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ կողմից կազմվել է թիվ 6108489 ակտը, որում որպես հիմնավորում նշվել է հետևյալը.

«Ռոմա Տրանս» ՍՊԸ-ն ք.Վանաձոր, Վարդանանց 3 նրբ. 9 հասցեում իրականացնում է ավտոտեխսպասարկման գործունեություն 5 ավտոտեխսպասարկման կետերի /աշխատատեղերի/ միջոցով, սակայն համաձայն «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի 5-րդ կետի ընկերության կողմից Վանաձորի ՏՀՏ է ներկայացվել արտոնագրային վճար վճարող համարվելու համար դիմում-հայտարարություն 2015թ. ապրիլից հունիս ամիսների համար 3 աշխատատեղի համար: Խախտվել է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի 9-րդ կետի պահանջները, համաձայն որի արտոնագրային վճարը յուրաքանչյուր ամսվա համար պետք է հաշվարկվեր 180.000 դրամ, սակայն կազմակերպության կողմից 2015թ. պակաս է ցույց տրվել 74.160 դրամ: Ակտով ընդամենը գանձման է առաջադրվել 120.992 դրամ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի բ) կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ-ի կողմից որևէ ձևով չի ապացուցվել հարկեր վճարելուց խուսափելու փաստը՝ ցույց չի տրվել տեսագրված նյութ, ապացույց, որը հավաստի այն հանգամանքը, որ «Ռոմա Տրանս» ՍՊԸ-ի կողմից ք.Վանաձոր, Վարդանանց 3/9-րդ հասցեում իրականացվում է ավտոտեխսպասարկում 5 ավտոսպասարկման կետերի միջոցով:

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետի համաձայն՝ սույն օրենքի անբաժանելի մասը կազմող թիվ 7 հավելվածով սահմանված գործունեության տեսակներ իրականացնողները համարվում են արտոնագրային վճար վճարողներ:

Օրենքի 7-րդ հավելվածի 2-րդ կետի 5-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի իմաստով ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեություն է համարվում ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) միջոցով ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկումը:

Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում են համարվում ավտոմեքենաների մեխանիկական և էլեկտրական սարքավորանքի, թափքի, ներարկման համակարգի, շարժիչի տեխնիկական սպասարկումը և նորոգումը, ավտոմեքենաների լվացումը, փայլեցումը, ներկումը կամ ներկերի փոշեցրումը, լուսամուտների և հողմապակիների, նստատեղերի նորոգումը, դողերի և

օդախցիկների նորոգումը, տեղադրումը, փոխարինումը, հակաքայքայիչ մշակումը, ավտոմեքենաների մասերի և պարագաների տեղադրումը, եթե դա արտադրական գործընթացի փուլ չէ:

Վկայակոչված նորմերի մեկնաբանության արդյունքում կարելի է հանգել այն եզրակացության, որ արտոնագրային վճար վճարողներ են համարվում Օրենքի անբաժանելի մասը կազմող թիվ 7 հավելվածով սահմանված գործունեության տեսակներ իրականացնողները:

Սույն գործի շրջանակներում ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ կողմից թիվ 6108489 ակտով որոշվել է «Ռոմա Տրանս» ՍՊԸ-ից գանձել 120.992 դրամ այն բանի համար, որ վերջինիս սեփականության իրավունքով պատկանում է 5 ավտոտեխսպասարկման կետեր հաշվի չառնելով այն հանգամանքը, թե բոլոր ավտոտեխսպասարկման կետերը գործունեություն իրականացնում են, թե ոչ, և արդյոք շահույթ հետապնդում են, թե ոչ:

ՀՀ կառավարության 2007թ. թիվ 655 որոշման 12-րդ կետի համաձայն՝ ներդիրների հատկացման պարտադիր պայման է սեփականության կամ օգտագործման իրավունքով կազմակերպությանը պատկանող հավաքակալայանի առկայությունը (...), որտեղ հավաքակալայանին ներկայացվող անհրաժեշտ պայմանները կարող են ապահովվել պայմանագրային հիմունքներով: Հավաքակալայանի անհրաժեշտ պայմաններն են՝

2) ավտոմոբիլների՝ գիծ դուրս գալուց առաջ տեխնիկական վիճակի վերահսկման կետի (դիտափոս կամ էստակադա) առկայությունը. (...):

2008թ. փետրվարի 4-ին ՀՀ պետական ռեգիստրում գրանցվել է «Ռոմա Տրանս» ՍՊԸ-ն և ստացել թիվ 03 Ա 079428 վկայականը:

2008թ. մարտի 1-ից «Ռոմա Տրանս» ՍՊԸ-ն զբաղվում է ՀՀ մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպմամբ:

Վկայակոչված ՀՀ կառավարության թիվ 655 որոշման 12-րդ կետի պահանջների համաձայն դեռևս 2011թ. մայիսի 16-ին «Ռոմա Տրանս» ՍՊԸ-ի և Նառա Հարությունյանի միջև կնքվել է անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր՝ Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոցի 3/9 հասցեում գտնվող 604,8 քմ մակերեսով բաղկացած ավտոսպասարկման կետի և 0.1 հա հողամասի անհատույց օգտագործման պայմանագիր:

ՀՀ կառավարության թիվ 655 որոշումը 2015թ. հունվարի 6-ին ուժը կորցրել է և մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման համար ավտոմոբիլների գիծ դուրս գալուց առաջ տեխնիկական վիճակի վերահսկման կետի առկայությունը այլևս պարտադիր չի համարվում:

2015թ. մարտի 23-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից Վարդանանց 3 նրբ./9 հասցեում 3 աշխատատեղի համար ստացվել է թիվ 44/220315011679/2 արտոնագիրը, որն ընկերության կողմից շահագործվում է:

Ինչ վերաբերվում է թիվ 6108489 ակտում նշված 2 կետերի շահագործմանը և շահույթ ստանալուն, ապա տվյալ տեղեկությունը առարկայազուրկ է, հիմնված չէ որևիցե ապացույցի վրա:

Վկայակոչված 2 կետերից մեկում տեղակայված են յուրի տարաներ և տարածքը ծառայում է որպես պահեստային մաս, իսկ մյուսն օգտագործվում է տաքսի ծառայության մեքենաները սպասարկելու համար, օրինակ՝ ավտոտնակ, որը չի կարող համարվել Օրենքի 7-րդ հավելվածով սահմանված գործունեության տեսակի օբյեկտ:

Վանաձորի ՏՀՏ տեսուչների կողմից «Ռոմա Տրանս» ՍՊԸ-ի ավտոտեխսպասարկման կայանի ստուգման ժամանակ խախտում չի արձանագրվել և

ընկերության օրինական պահանջին կազմել արձանագրություն՝ խախտումներ չհայտնաբերելու մասին, չի կազմվել պատճառաբանելով, որ սույն թվականի ապրիլի 8-ին Երևանից ժամանած հարկային տեսչության ստուգողներն իբր նկատել են արտոնագրային վճարի խախտում և ցուցում տվել արձանագրել իրենց թվացած կամ մտացածին խախտումը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 37-րդ հոդվածի 1-ին մասի, 57-րդ հոդվածի 1-ին մասի, 63-րդ, 69-րդ, 70-րդ և 76-րդ հոդվածների դրույթները «Ռոմա Տրանս» ՍՊԸ-ն խնդրում է անվավեր ճանաչել 2015թ. մայիսի 4-ի ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ թիվ 6108489 ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ պետի 13.04.2015 թ-ի թիվ 6108489 հանձնարարագրի համաձայն «Ռոմա Տրանս» ՍՊԸ-ում կատարվել է օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում, որն ընդգրկել է 01.04.2012 թ-ից մինչև 21.04.2015 թ-ն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 04.05.2015 թ-ի թիվ 6108489 ակտը (այսուհետ նաև Ակտ), որի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է հետևյալը.

«Ռոմա Տրանս» ՍՊԸ-ն ք.Վանաձոր, Վարդանանց 3 նրբ./9 հասցեում իրականացնում է ավտոտեխսպասարկման գործունեություն 5 ավտոտեխսպասարկման կետերի /աշխատատեղի/ միջոցով, սակայն համաձայն «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի 5-րդ կետի ընկերության կողմից Վանաձորի ՏՀՏ է ներկայացվել արտոնագրային վճար վճարող համարվելու համար դիմում-հայտարարություն 2015թ. ապրիլից-հունիս ամիսների համար 3 աշխատատեղի համար: Խախտվել է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի թիվ 8 հավելվածի 9-րդ կետի պահանջները, համաձայն որի արտոնագրային վճարը յուրաքանչյուր ամսվա համար պետք է հաշվարկվեր 180000 դրամ, սակայն կազմակերպության կողմից 2015 թ-ին պակաս է ցույց տրվել 74160 դրամ:

Հիմք ընդունելով «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 25-րդ հոդվածների դրույթները արտոնագրային վճարի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 120.992 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

Ակտի 1-ին կետով որպես խախտում է արձանագրվել, որ «Ռոմա Տրանս» ՍՊԸ-ն ք.Վանաձոր, Վարդանանց 3 նրբ./9 հասցեում իրականացնում է ավտոտեխսպասարկման գործունեություն 5 ավտոտեխսպասարկման կետերի միջոցով, սակայն 2015 թ-ի ապրիլից-հունիս ամիսների համար Վանաձորի ՏՀՏ է ներկայացվել արտոնագրային վճար վճարող համարվելու համար դիմում-հայտարարություն 3 աշխատատեղի համար:

«Ռոմա Տրանս» ՍՊԸ-ի վարչական բողոքում բերված հիմնական փաստարկը վերաբերվում նրան, որ Ակտի 1-ին կետով արձանագրված խախտումը որևէ կերպ հիմնավորված չէ:

Հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում»:

Քննարկվող դեպքում Ակտի կազմման պայմաններում «Ռոմա Տրանս» ՍՊԸ-ի համար առկա են ոչ բարենպաստ փաստական հանգամանքներ: Այսինքն, Ակտի 1-ին կետով արձանագրված խախտման ապացուցման պարտականությունը կրում է ստուգող մարմինը՝ ի դեմս ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց:

Սույն բողոքի քննարկման ընթացքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ տվյալ դեպքում Ակտի 1-ին կետով արտոնագրային վճարի գծով լրացուցիչ պարտավորությունը առաջադրվել է վերոգրյալ օրենսդրական նորմի, այն է՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց առաջարկվեց Հանձնաժողովին ներկայացնել ստուգման ընթացքում ձեռք բերված այն ապացույցները, որոնք հիմք են հանդիսացել Ակտի 1-ին կետում նկարագրված խախտումն արձանագրելու համար, սակայն, ըստ էության, որևէ հիմնավոր ապացույց չներկայացվեց:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում կիրառելի է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, որի համաձայն. «Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել»:

Իր հերթին, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի, անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Ակտի դեմ «Ռոմա Տրանս» ՍՊԸ-ի կողմից բերված վարչական բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Յ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 04.05.2015 թ-ի թիվ 6108489 ակտը:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝

